ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2024թ. հոկտեմբերի 21 -ին, N 490 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՓԱՐՊԻԻ Ղ.ՓԱՐՊԵՑՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐԾԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով, 164-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Վ. Պետրոսյանի 2024 թվականի հոկտեմբերի 18-ի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Փարպիի Ղ.Փարպեցու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վարդան Պետրոսյանին տրամադրել ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 5 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հոկտեմբերի 21-ից հոկտեմբերի 25-ը ներառյալ:
2. Վարդան Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Փարպիի Ղ.Փարպեցու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել տնօրենի պարտականությունները կատարող Լիլիթ Գյոզալյանի վրա:
3. Վարդան Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի հոկտեմբերի 28-ից:

21.10.2024

X

VERIFIED OCSP 21.10.2024 18:24:39 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ